ԹԻՎ 5 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 6-Ա

«**22**» **սեպտեմբեր** ***2023թ.***
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտում-ների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 19 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 19 տեղամասային կենտրոններ և կազմավորվել թվով 19 տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Թվով 19 տեղամասերից 15-ի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ թիվ 5/01, թիվ 5/02, թիվ 5/03, թիվ 5/04, թիվ 5/05, թիվ 5/06, թիվ 5/07, թիվ 5/09, թիվ 5/10, թիվ 5/13, թիվ 5/14, թիվ 5/17, թիվ 5/18, թիվ 5/19:

1) Թիվ 5/08 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

Լիանա Բատիկյան. «Վիճակահանության արդյունքները ներառված չեն մատյանում, այլ գրված է առանձին թղթի վրա որը կարող է փոխվել»

2) Թիվ 5/11 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

<<Հայաքվե>> դիտորդական առաքելություն Նարեկ Սարգսյան Վրեժի. «Ապրելու Երկիր կուս. կատարվել է խախտում չի պահպանվել 50մ. Տեղամասից քարոզի արգելքը»:

3) Թիվ 5/12 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

Քերոբյան Վարդան Երվանդի (հանձնաժողովի նախագահ). «քաղաքացի Սիրանույշ Սամվելի Միսակյանը կորցրել է իր տեխ. կտրոնը և զրկվեց ընտրելու իրավունքից:»:

4) Թիվ 5/15 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

«Հայաքվե» դիտորդական առաքելություն. «Ապրելու Երկիր կուսակցությունը խախտել է սահմանված 50մ նորմը: Պաստառը փակցված է թիվ 199 և թիվ 196 դպրոցներ:»:

5) Թիվ 5/16 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

«Հայաքվե» դիտորդական առաքելություն. «Ապրելու Երկիր կուսակցության պաստառը փակցված է N 196 դպրոցի, 199 դպրոցի պատին:»

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված գրառումը վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի վարման կարգին: Կատարվել է գրառում, որ վիճակահանության արդյունքները ներառված չեն մատյանում: Թիվ 5/08 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի 17.09.2023թ. թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է օրակարգի առաջին հարցը՝ քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում 2 ժամը մեկ պարբերականությամբ՝ ընտրողներին գրանցող, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, ինքնասոսնձվող դրոշմանիշներ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամներին որոշելու վիճակահանությունը: վիճակահանության արդյունքում որոշված հանձնաժողովի անդամները գրանցված են ըստ ժամային հերթափոխի:

Ուստի, Լիանա Բատիկյանի կողմից կատարված գրառումը վիճակահանության արդյունքների վերաբերյալ, չի համապատասխանում իրականությանը:

2) Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում կատարվել է արձանագրում առ այն, որ քաղաքացին տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնը մինչև քվեաթերթիկ ստանալը կորցրել է: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ «1. Քվեարկության կտրոնն ստանալուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնում քվեարկության կտրոնը:»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրողը չի ներկայացրել քվեարկության կտրոն, ուստի չէր կարող ստանալ քվեաթերթիկներ ու ծրար: Հանձնաժողովը գործել է Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան: Ներկայացված հանգամանքներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում առկա չէ:

3) Սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդների կողմից արձանագրված <<Ապրելու Երկիր>> կուսակցության քարոզչական պաստառի վերաբերյալ թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղեկացվել է քվեարկության օրը ժամը 10:15-ին, որից հետո այցելել է նշված տեղամասային կենտրոնները, ստուգել դրանց առկայությունը: Պարզվել է, որ <<Ապրելու Երկիր>> կուսակցության քարոզչական պաստառը փակցված է թիվ 196, թիվ 199 և թիվ 192 դպրոցների պատերին: Դրանց վերաբերյալ տեղեկացրել է Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարին, որից հետո կարճ ժամկետում քարոզչական պաստառները հեռացվել են: Թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Թիվ 5 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ **Մ.Մարտիրոսյան**